

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի

(գանգատ թիվ 40094/05)

Երրորդ բաժանմունքի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռ

Կոնվենցիայի 3-րդ հոդված

Խոշտանգումների արգելք

Ազատագրկման ընթացքում ստացած վնասվածքների առաջացման հավաստի բացատրությունների բացակայություն: *Արձանագրվել է խախտում:*

Արդյունավետ քննության բացակայություն

Դատան վերաբերմունքի մասին պնդումների վերաբերյալ արդյունավետ քննություն չի իրականացվել: *Արձանագրվել է խախտում:*

Կոնվենցիայի 6-րդ հոդված

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետ

Անմեղության կանխավարկածի խախտում

Դատախազի հայտարարությունը գործը կարճելիս, որ կասկածյալը հատուցել է իր մեղքը: *Արձանագրվել է խախտում:*

Կոնվենցիայի 14-րդ հոդված

Խտրականության արգելք

Դատան վերաբերմունքի քաղաքական դրդապատճառների մասին պնդումների վերաբերյալ արդյունավետ քննության բացակայություն: *Արձանագրվել է խախտում:*

Դատան վերաբերմունքի քաղաքական դրդապատճառների պնդումները օբյեկտիվորեն ճշմարտանման չեն: *Խախտում չի արձանագրվել:*

Փաստերը

Քննարկվող ժամանակահատվածում դիմումատուն Հայաստանի հիմնական ընդդիմադիր կուսակցություններից մեկի անդամ էր: Խնդրո առարկա իրադարձությունները տեղի են ունեցել քաղաքական բարձր ակտիվության շրջանում, երբ դիմումատուն մասնակցել էր մի շարք հակակառավարական հանրահավաքների: Հանրահավաքներից մեկի ժամանակ նրան տարել են ոստիկանության բաժին, քանի որ ուստիկանությունն անանուն զանգ էր ստացել առ այն, որ դիմումատուի մոտ հրազեն կա: Ոստիկանական արձանագրության համաձայն՝ դիմումատուն կոպիտ և անվայելուչ արտահայտություններ էր թույլ տվել, ուստի վարչական վարույթ էր հարուցվել: Այնուհետև դիմումատուն մեղադրվել էր վարչական վարույթի հարուցման մասին որոշումը իրեն հայտնած ոստիկանի վրա հարձակվելու համար: Դիմումատուն չէր համաձայնել իրադարձությունների այսպիսի նկարագրության հետ՝ պնդելով, որ ինքը համագործակցել է ոստիկանության հետ, սակայն որոշակի պահի սկսել է դաժան ծեծի ենթարկվել. նրան ձեռնաշղթաներ են հագցրել և սկսել մետաղական առարկաներով հարվածել, այդ թվում՝ գոտկատեղից ներքև, մինչև նա կորցրել է գիտակցությունը: Այդ իրադարձությունների հետևանքով դիմումատուն ծանր վնասվածքներ է ստացել, և հետագայում ստիպված է եղել հեռացնել իր ձախ ամորձին: Դատախազը որոշել էր դադարեցնել քրեական հետապնդումը դիմումատուի նկատմամբ ՀՀ քր. դատ. օր. նախկին 37-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն այն հիմքով, որ դիմումատուն «քավել է իր մեղքը՝ հանցագործության կատարման ժամանակ ստանալով ծանր վնասվածք»:

Եվրոպական դատարանին հասցեագրված իր գանգատում դիմումատուն բողոքել է, որ իր նկատմամբ վերաբերմունքը հանդիսանում է խոշտանգում իր քաղաքական հայացքների համար և որ արդյունավետ հետաքննություն չի իրականացվել դրա վերաբերյալ: Նա նաև պնդել է, որ ՀՀ քր. դատ. օր. նախկին 37-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա քրեական գործը կարճելու դատախազի որոշումը խախտել է անմեղության կանխավարկածի իր իրավունքը:

Իրավունքը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդված

(ա) Նյութական կողմ: Այն դեպքերում, երբ անհատին տանում են ոստիկանության բաժին առողջական նորմալ վիճակում և ազատվելիս նա ունենում է վնասվածքներ, Կառավարությունը պարտավոր է բավարար և համոզիչ բացատրություններ տալ այդ վնասվածքների առաջացման պատճառների մասին: Այս գործում Կառավարությունը որևէ այլ փաստարկ չի ներկայացրել, քան ներպետական պաշտոնական հետաքննության արդյունքներին հղում անելը: Սակայն նշված հետաքննությունը հիմնարար թերություններ է ունեցել: Հետևաբար, դատարանը բավարար չի համարել դիմումատուի վնասվածք ստանալու պատճառների վերաբերյալ կառավարության բացատրությունները (դիմումատուն ընկել է բաժանմունքում) և եզրակացրել է, որ այդ վնասվածքները բացատրվում են նրա նկատմամբ ցուցաբերված դաժան վերաբերմունքով, որի համար պատասխանատու են իշխանությունները: Դիմումատուն ենթարկվել է վերաբերմունքի ծայրահեղ դաժան ձևի, որը նրան պատճառել է ծանր ֆիզիկական և մտավոր տառապանքներ: Հաշվի առնելով դաժան վերաբերմունքի բնույթը, աստիճանը և նպատակը՝ Եվրոպական դատարանը գտել է, որ այն կարող է բնութագրվել իբրև խոշտանգում:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):

(բ) Ընթացակարգային կողմ: Դաժան վերաբերմունքի մասին լուրջ ենթադրությունների վերաբերյալ հետաքննությունը պետք է լինի համապարփակ: Սա նշանակում է, որ իշխանությունները մշտապես պետք է ձեռնարկեն լուրջ քայլեր՝ պարզելու համար, թե ինչ է տեղի ունեցել: Ինչևէ, այս գործով իրականացված հետաքննությունը պարունակում է բազմաթիվ թերություններ: Ի թիվս այլնի, այն ամբողջությամբ հիմնված է ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, և բժշկական արձանագրությունները բավականին քիչ են: Դիմումատուն հետաքննության բոլոր փուլերում հետևողականորեն և մանրամասն նկարագրել է, թե ով է իրեն հարվածել և ինչպես, և նրա պնդումները համապատասխանում են տարբեր բժշկական արձանագրություններում պարունակվող նրա վնասվածքների նկարագրությանը:

Հետևաբար, Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ հետաքննության միակ նպատակը եղել է դիմումատուին պատժելը և մեղադրանքի համար ապացույցներ հավաքելը, ուստի հետաքննությունը չի ունեցել օբյեկտիվության և անկախության անհրաժեշտ մակարդակը:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետ

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատուի նկատմամբ քրեական գործով վարույթը կարճելու մասին դատախազի որոշումը քրեական դատավարության օրենսգրքի նախկին խմբագրությամբ 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիմքով՝ այն է՝ կատարվածի քավումը տուժանքի միջոցներով, իրավունքի սահմանափակումներով, այլ զրկանքներով, որն անձը կրել է իր կատարած արարքի կապակցությամբ, ինքնին ենթադրում էր, որ մեղսագրվող արարքի կատարումը անվիճարկելի փաստ է՝ հետևյալ բառերով հիմնավորմամբ, որ «Հանցանքը կատարելու ժամանակ (դիմումատուն) նույնպես վնաս է ստացել» և «զրկանքների միջոցով (դիմումատուն) քավել է իր մեղքը»: Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից առանց դիմումատուի մեղքը օրենքով սահմանված կարգով ապացուցելու դատախազի այդ որոշումն անփոփոխ թողնելը անմեղության կանխավարկածի խախտում է:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ 3-րդ հոդվածի զուգակցմամբ

(ա) Նյութական կողմ: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատուի սկզբնական ձերբակալումը անուղղակիորեն կապված էր ընդդիմության անդամ լինելու և հանրահավաքներին մասնակցության հետ: Այնուամենայնիվ, դատարանը մատնանշել է, որ դիմումատուի ենթադրությունները ստուգելու որևէ օբյեկտիվ եղանակ չկա: Ճշմարիտ է, որ դիմումատուի՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված ձերբակալությունը սուր քննադատությունների և լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Այդուհանդերձ, դա բավարար չէ եզրակացնելու, որ վատ վերաբերմունքը, որպես

այդպիսի, պարզապես պայմանավորված է եղել քաղաքական դրդապատճառներով: Դատելով գործի հանգամանքներից՝ չի կարելի բացառել, որ դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել՝ ուստիկանության աշխատակից Հ.Մ.-ին պատճառած վնասի համար վրեժ լուծելու նպատակով: Չի կարելի բացառել նաև, որ ուստիկանության աշխատակիցների բռի վարքագիծը պայմանավորված է եղել դիմումատուի հետ առերեսման փաստով կամ ուստիկանության բռնի ուժի գործադրման պատճառներով, որոնք հնարավոր չէ բացատրել: Նման գործողությունները պետք է արժանանան անվերապահ դատապարտման և որևէ պարագայում չպետք է արդարացվեն կամ ներվեն, սակայն Դատարանը չի կարող ամբողջությամբ համոզված լինել, որ դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը պայմանավորված է եղել իր քաղաքական համոզմունքներով:

Եզրակացություն: Խախտում չի արձանագրվել (միանձայն):

(բ) Ընթացակարգային կողմ: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ հետաքննության մարմիններն ունեին հավաստի և բավարար տեղեկություններ, որոնց հիման վրա ակնհայտ էր դառնում նախնական ստուգում և, կախված արդյունքից, դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի հնարավոր քաղաքական դրդապատճառների հետաքննություն անցկացնելու անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, պետական մարմինները գրեթե ոչինչ չեն արել այս տեղեկությունները ստուգելու համար: Ուստիկանության միայն երկու աշխատակիցներից էին հարցրել, թե արդյոք իրենք տեղյակ են եղել դիմումատուի քաղաքական պատկանելիության մասին, սակայն սա չի կարող համարվել նման լուրջ պնդումը հետաքննելու իրական փորձ և պարզապես ձևական բնույթ է կրում: Այլ հարցեր չեն տրվել, իսկ ուստիկանության մյուս աշխատակիցները, այդ թվում՝ նրանք, ում դիմումատուն ուղղակիորեն մատնանշել է, որպես իր նկատմամբ բռնի գործողություններ կատարելուց առաջ և հետո քաղաքական տեսանկյունից անհանդուրժողական հայտարարություններ արած անձանց, նույնիսկ չեն հարցաքննվել այդ պնդումների առնչությամբ: Ոչ մի փորձ չի կատարվել՝ պարզելու դիմումատուի ձերբակալման հանգամանքները, այդ թվում՝ բազմաթիվ

անճշտություններ և ձերբակալման հնարավոր քաղաքական երանգը մատնանշող այլ տարրեր, իսկ ներկայացված նյութերից ոչ մի եզրակացություն չի արվել: Ուստի Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ պետական մարմինները չեն կատարել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ դիտարկվող 14-րդ հոդվածի համաձայն ստանձնած իրենց պարտավորությունը, այն է՝ ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը՝ պարզելու, թե արդյոք դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը ցուցաբերվել է խտրականության հիմքով:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):